

ԱԷՏԱՐԵՐ



“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՇԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16:


ՀԱՏՈՐ ԺԵ.

ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼԻՍ, ՆՈՅՆՄԲԵՐ 1, 1886

ԹԻԻ 11

ԹԱՃ ՄԱՀԱՆ

Դանդէս գետոյ մէկ ճիւղին, ճումնայի, եղերաց վրայ կը գտնուի Ակրա քաղաքը որ ժամանակաւ էր Հընդկաստանու կարևորագոյն քաղաքացի մին. սա տակաւին ունի իբր 150,000 բնակիչ: Անոր ընտիր շինուածոց կարգէն է մարդարտեայ միջկիթը, Հնդկաստանու շքեղագոյն մզկիթը, և աւելի հռչակաւորը՝ Թաճ Մահալ կոչուած շէնքը որ կը տեսնուի պատկերին մէջ: Սա կը համարուի երկրագնացոյս վրայ գտնուած ամենէն գեղեցիկ շէնքերէն մին, և անոր այցելուները բարձր դովեստներ կը խօսին անոր վրայ: Անոնց մէջ մին որ կը համարի գոյն երկրիս ընտրելագոյն տեսարանը, կ'ըսէ,



ԹԱՃ ՄԱՀԱՆ

«Թէպէտ ուշ ժամանակ հասնիս Ակրա, եթէ լուսնի լոյս կայ, գնա Թաճ:» Ուրիշ մը կ'ըսէ, «Թաճի վրայ և ոչ մի գրուած բառ արժանոյն նկարագրած է զայն:»

Այս գարմանայի շէնքը շինուեցաւ Շահ ձիհանէ, որ էր հռչակաւոր Է.բ. պէրի թուրք, իբրև շիրիմ իւր սիրելի կնոջ Մուսթաֆա Մահալի և իրեն: Կ'ըսուի թէ զայն կառուցանելու համար աշխատեցան 20,000 մարդիկ 22 տարի, և թէ ծախսուեցաւ աւելի քան 2,000,000 Սնդղ. ոսկի: Առաջ շինուեցաւ բարձրաւանդակ մը կարմիր աւազաբարէ 20 ոտք բարձր և 1,000 ոտք

լայն, ասոր վրայ՝ ուրիշ մը սպիտակ մարմարիոնէ, խրաքանչիւր կողմը 300 ոտք երկայնութեամբ և 15 ոտք բարձր: Այս երկրորդ բարձրաւանդակին անկիւններէն կը բարձրանան 4 գեղեցիկ մզկիթի աշտարակներ մարմարիոնէ, և անոր կեդրոնը՝ հակայաչէն շիրիմը որուն խրաքանչիւր կողման երկայնութիւնն է 186 և բարձրութիւնը՝ 200 ոտք: Ասոնք ամէնը շինուած են սպիտակ մարմարիոնէ և անոնց վրայ փորագրեալ են նրբագոյն քանդակներ և ընդելուզեալ են պատ-

մը ցնցոտիներ հազած, մի խօսքը անսրքով ցնցոտեաց վրայ որ լսէ: Եթէ գտնուի կաղ տղայ մը, որոշեցէք անոր համար խաղին մէջ այնպիսի մաս մը որ չպահանջէ վազել: Եթէ գտնուի անօթի տղայ մը, տուէք անոր ձեր ճաշէն մաս մը: Եթէ գտնուի բժաւիտ տղայ մը, օգնեցէք անոր պատաստել իւր դասը: Եթէ գտնուի սրբամիտ տղայ մը, մի նախանձիք անոր, վասն զի եթէ տղայ մը կը հպարտանայ իւր տաղանդներուն համար և ուրիշ մը կը նախանձի անոնց, երկու մեծ սխալ կը գործուի, բայց տաղանդը առջինէն աւելի չըլլար: Եթէ քան

ուսկան ահուհըով: Կ'ըսուի թէ ամբողջ կուրանը գրուած է անոր պատերուն վրայ թանկագին ահուհըով ձեւացեալ գրերով, և այնպէս յարմարցուած է որ լոյսը երբ կը ծագէ անոնց վրայ, յառաջ բերէ սքանչելի փափուկ և գեղեցիկ երևոյթ: Շահ ձիհան որ կառուցեց զայն, իշխանաց 1627էն մինչև 1657:

ԹՕՍԻ ՄԸ

ՍՒՐ ՏՂԱՅՍ

Տղայք, դուք ըստեղծուած էք ըլլալ քաղցր, առատածեուն և վեհանձն: Եթէ գրանուի դպրոցին մէջ տղայ մը որուն ոտից թափը ծուած է, թող չգիտնայ թէ դուք երբէք տեսած էք զայն: Եթէ գրանուի աղքատ տղայ մը ցնցոտեաց վրայ որ լսէ: Եթէ գտնուի կաղ տղայ մը, որոշեցէք անոր համար խաղին մէջ այնպիսի մաս մը որ չպահանջէ վազել: Եթէ գտնուի անօթի տղայ մը, տուէք անոր ձեր ճաշէն մաս մը: Եթէ գտնուի բժաւիտ տղայ մը, օգնեցէք անոր պատաստել իւր դասը: Եթէ գտնուի սրբամիտ տղայ մը, մի նախանձիք անոր, վասն զի եթէ տղայ մը կը հպարտանայ իւր տաղանդներուն համար և ուրիշ մը կը նախանձի անոնց, երկու մեծ սխալ կը գործուի, բայց տաղանդը առջինէն աւելի չըլլար: Եթէ քան

զձեզ մեծ և ուժեղ տղայ մը ձեզ
 ֆլաս մը հատուցած է և կը ցաւի աւ-
 նոր վրայ ներքեցէք անոր: Բարձր դրու-
 րացականք պիտի ցուցնեն հաճութիւն
 իրենց դէմքին վրայ թէ որչափ աւելի
 լաւ է այս քան մեծ աղմուկ հանել:

ՀՈՆՈՂՈՒԼՈՒՒ


Հոնորուլու, մայրաքաղաք Սանտուիչ,
 կամ ինչպէս աւելի յարմարապէս կը
 կոչուի, Հալպեան կղզեաց, մեծցած
 է այս պատկերը առնուելէն հետեւ և
 հիմա ունի 13,000 է մինչև 20,000 բնա-
 կիչ: Այս կղզիներն են խաղաղական
 մեծ Ուլիանոսին մէջ, աւելի քան 2,000
 մըն հեռի ֆալիֆորնիայէ, մէկ կող-
 մէն, և գրեթէ 3,800 մըն հեռի ճա-
 բոնէ, միւս կողմէն: Հոնու-
 լուլու ունի ընտիր նաւահան-
 դիտ մը, պաշտպանուած
 պարիսպներով որ շինուած են
 ոչ մարդոց ձեռամբ այլ փոք-
 ըրիկ բուստի որդերէն: Նա-
 խորդ երեսին մէջ խօսած ենք
 մեծ շէնքի մը վրայ որոյ շինու-
 թեանն համար հաղարաւոր
 մարդիկ աշխատեցան տարի-
 ներով: Բայց այս պարիսպ-
 ներն են դործ հարիւրաւոր
 միլիոն փոքրիկ գործաւորաց
 որ աշխատած են անոնց վրայ
 դարերով: Այլ և այլ ընկերու-
 թեանց կանոնաւոր շոգենա-
 ւեր կը հանդպին Հոնորուլու, և
 անոր մեղմ և միօրինակ կլի-
 ման, սիրելի տեղ մը ըլլած է
 զայն հիւանդաց: Բնաւ չընենր
 հոն ոչ շատ տաք և ոչ շատ ցուրտ:

Յաւով սրտի կ'ըսենք, սակայն, թէ
 կղզւոյն բնիկ ցեղը հասնելու վրայ է
 և անոր տեղը կ'անցնի խառն ցեղ մը:
 Շատ մը Չինացիք և Եւրոպացիք կը
 բնակին հոս, որոցմէ շատեր ինձամու-
 թիւն կ'ընեն բնիկներուն հետ: Թա-
 դաւորին պարսան է ի Հոնորուլու, և
 անոր գլխաւոր դատաւորը համարա-
 րանի մէջ էր դատարնկեր Աւստրալի-
 խմբադրոյն:

ԳԵՂԵՑՅԻՎ ՓՈՒՔԻ ԲԱՐՈՋ ՄԸ

Մը. Հարվի ձի հեծած կամաց
 կամաց կ'երթար փոշուտ ճամբէ մը,
 իւր չորս կողմը նայելով որպէս զի
 տեսնէր վազուն ջուր մը կամ տուն մը
 ուր կարող ըլլար հանգչեցունել իւր
 յողմած և ծարաւ ձին առատ ջուր
 խմցունելով անոր:
 Երբ Մը. Հարվի կը մտածէր և կը

գամ որ տղան քիչ մը կը կազար:
 «Յիրաւի, տէր իմ, չեմ ուզեր
 ստակը: Փոքր բան մը միայն կրնամ
 ընել իմ անձիս և կամ որեւիցէ ուրիշ
 մէկու մը համար: Ես կաղ եմ, և
 քամակս ֆասուած է, և մայրս կ'ըսէ
 թէ հոգ չէ թէ բարիք մը որչափ փոքր
 երևի, եթէ միայն այն է ամէնը զոր
 կրնանք ընել, Աստուած կը սիրէ զայն
 իբրև մեծ բարիք: Եւ այս է ամենէն
 շատը որ կրնամ ընել ես այլոց համար:
 Կը տեսնէք, տէր, որ Բէյնալիլի ասկէ
 հեռաւորութիւնն է ութ մղոն. և
 ես հասկցած եմ թէ չկայ այս ճամ-
 բուն վրայ հոսանք մը, և վասն որոյ
 գրեթէ ամէն մարդու ձի որ կ'անցնի
 ասկէ կ'ըլլայ ծարուած:»
 Մը. Հարվի վար կը նայէր սողին
 գորշ աչուրներուն մէջ որ կը բոցա-
 փայլէին և կը վառէին ուրիշներու բա-
 ռիք ընելու խորհրդով, և արտասուք



ՀՈՆՈՂՈՒԼՈՒՒ

կղզեաց բնակիչք առաջ էին մար-
 դակներ, և բնութեամբ նշանաւոր էին
 իբրև յոյժ անդուլթ և անառակ: Անգ-
 ղիացի նաւապետը, Գուք, որ գտաւ
 այս կղզիները 1778 ին, ընդունուեցաւ
 բնիկներէն իբրև աստուած, և անոր
 մատուցին աղօթք և զոհեր. սակայն
 երբ յաջորդ տարին դարձեալ այցե-
 լեց անոնց, սպաննուեցաւ անոնցմէ:
 Բայց կղզեցւոց քուրսերը պահեցին
 անոր ոսկրները իբրև առարկայ եր-
 կըրպագութեան:
 Ասկէ 70 տարիէն քիչ առաջ՝ առա-
 ջին միսիոնարք գացին այս կղզիները,
 և քիչ տարի համբերատար աշխա-
 տութենէ ետքը, բարեբախտ եղան
 տեսնել բոլոր ցեղը Գրիստոնեայ եղած
 և անոնց խոնարհ եկեղեցեաց մէջ և
 զիրենք նուիրելը ճշմարիտ Աստուծոյ
 պաշտաման: Գարիբէ հետէ արմատա-
 ցած բարբարոսութեան հետքը ան-
 կարելի է ջնջել շուտով, բայց և այն-
 պէս Աւետարանին ազդեցութիւնն այս
 կղզեաց մէջ դարմանալի եղած է:

դարմանար, գարձուց իւր ձիուն զրախը
 ելլել զառ ի վեր տեղ մը ճամբուն
 վրայ, և տեսաւ իւր առջև ագարակի
 աղւոր տնակ մը, և նոյն ժամանակ
 տղայ մը տասն տասներկու տարեկան,
 եկաւ ճամբուն վրայ ձեռքն ունենա-
 լով ջուրի աման մը և ուղղակի անոր
 առջև կանգնեցաւ:
 «Ի՛նչ կ'ուզես, աղաս», ըսաւ Մը.
 Հարվի կեցունելով իւր ձին:
 «Չիղ կ'ուզե՞ խմել ջուր, տէր իմ»,
 ըսաւ տղան ակնածութեամբ:
 «Մնշուշտ, կ'ուզէ, և ես չուարած
 մնացած եմ թէ ուստի կրնամ դըռ-
 նել ջուր:»
 Մը. Հարվիի դարմանալի չթուե-
 ցաւ այս, կարծելով թէ տղան այս
 կերպով կ'ուզէր շահել քանի մը փարա,
 վասն որոյ մատուց անոր արծաթ ստակ
 մը, բայց դարմանալու տեսնելով որ տղան
 չառաւ ստակը:
 «Կ'ուզեմ որ առնուս ստակը»,
 ըսաւ, հետաքրքրութեամբ նայելով
 սողին վրայ, և դիտելով առաջին ան-

եկաւ բուն իսկ իւր աչաց մէջ երբ
 մէկ վայրկեան ետքը սկսաւ շարունա-
 կել իւր ճամբան խորհելով այն ազ-
 դու փոքր քարոզին վրայ զոր լսեց
 առաքինի տղէն յանակնկալաւ:
 ՀՈՆ ՆՈՒՔՍ
 Ճոն Նոքս, Սկոթլանդ մեծ Բարե-
 կարգիչը, ծնաւ 1305 ին և մեռաւ
 1372 ին: Այնպիսի փոթորակից ժա-
 մանակաց մէջ ապրեցաւ, որոյ վրայ
 Սկոթլանդ այժմու բնակիչք քիչ գա-
 ղափար ունին:
 Չեւնադրուեցաւ կաթոլիկ քահա-
 նայ, բայց կարգալով նախնի քրիս-
 տոնեայ հարց դրուածները, խախտե-
 ցաւ նորա հաւատքը այն եկեղեցիէն,
 և 1342 ին բաժնուեցաւ անկէ և յա-
 րեցաւ Բարեկարգութեան: Յաջորդ
 տարին անոր բարեկամը, չորճ Ուի-
 չարթ, այրուեցաւ ցրի վրայ, և երեք
 տարի ետքը զնա դատապարտող կար-
 դինալը սպաննուեցաւ: Խնամապետ թա-

գուհին կարգիւնային մահուան վճիռը լուծելու համար, պաշարեց ամբողջ ուր Բողոքականք պատաստանած էին. օգնեց անոր նաև Գաղիական նաւատորմը: Բողոքականք անձնատուր եղան նպաստաւոր պայմաններով որ այսու ամենայնիւ եղծուեցան, և ճոն Նոքս այրոց հետ զրկուեցաւ աշխատիլ թիաքարչ նաւերու մէջ: Մնաց հոն այս ծանր ծառայութեան մէջ չլիթայակապ մէկ ու կէս տարի և յետոյ արձակուեցաւ ազատ: Քարողեց նա յԱնգղիա հինգ տարի, բայց երբ Բողոքական պատանի թագաւորը Եդուարդ 2. մեռնելով անոր յաջորդեց նորա կաթողիկ քոյրը, Նոքս փախաւ Զուիցերի, ուր սիրալիբ ընդունելութիւն գտաւ կաթոլիկի, Պէզայի և ուրիշ Բարեկարգչաց խումբէն: Յամին 1559 վերըստին դարձաւ Սկոտլան, և այս ժամանակէն մինչև իւր մահը թերևս ամենէն ազդեցիկ անձն էր ի Սկոտլան թէ քաղաքականութեան և թէ կրօնի մասին: Իբր տարի մը քաղաքական պատերազմ եղաւ կաթողիկներուն և Բողոքականաց մէջտեղ, կաթողիկաց կ'օգնէին Գաղիացիք և Բողոքականաց՝ Անգղիացիք: Երբ մեռաւ Խնամասկեա թագուհին, դադարեցաւ պատերազմը և Խորհրդաւրատարակեց զԲողոքականութիւն: Եւ սակայն խռովութիւնք չդադարեցան, և Նոքս որ երկիւզ չէր գիտեր, բնաւ չէր վարաներ յանդիմանել զայնպիսիս որք, կը համարէր թէ, ծուռ կը գործէին, ինչ աստիճան և դիրք որ ունենային անոնք: Մանկամարդ թագուհւոյն այնպէս խստիւ կը խօսէր որ անգամ մը լացուց զնա: Սկոտլան այն ատեն Անգղիոյ հետ դեռ չէր միացած, այլ էր ուրոյն թագաւորութիւն, և Անգղիոյ դեսպանը կ'ըսէր թէ «Նոքսի քարողութիւնը աւելի կեանք կը ներշնչէր անոր քան 600 փողերու ձայնը»:

Ճոն Նոքս էր բնաւորութեամբ խիստ, չունէր մեղմ վարմունք և աւելի յանկուցիչ յատկութիւն, և սակայն մեծ գործ մը ըրաւ Սկոտլանոյ համար:

ՓՏԱԾ ՍԵՒՐ

Երկու գիւղացի պատանիներ առաւօտ մը կանուխ դացին շուկան և իրենց տեղեր պատրաստելով նստան սպասել յաճախորդներուն: Անոնցմէ մին բերած էր պտուղ և բանջարեղէններ զորս ինք անձամբ մշակած էր, և միւսը՝ բերած էր ձուկեր: Առևտրոյ ժամերը կ'անցնէին, և երկու փոքրիկ փաճառականք ևս հաճութեամբ կը տեսնէին թէ իրենց փաճառքը կը քիչնոր հետզհետէ և անոր փոխարէն արծաթ փայլուն ստակ կը լեցուէր իրենց սուփերուն մէջ: Մնացած էր մէկ սեխ մը Հարրիի քով, և ահա մարդ մը եկաւ և դնելով ձեռքը սե-

մարդոց առջև: Ես այսուհետև պիտի գամ քննէ զնեկ պտուղ: Այս ձուկերը թափում են», շարունակեց մարդը խօսել զառնայով միւս պատանւոյն, Բենիամինի: «Այո, տէր, թարմ են. այս առաւօտեան: Ես անձամբ բոնեցի զանոնք», պատասխանեց պատանին, և մարդը գնեց անոնցմէ, և դնաց իւր ճամբան: «Հարրի, ի՞նչ յիմարութիւն ըրիր որ ցուցուցիր մարդուն սեխին փտած կողմը: Հիմա տուն պիտի տանիս զայն կամ նետես իբրև արդիւնք քու անմտութեանդ: Ի՞նչ գիտէ նա թէ երէկուան բռնուած ձուկեր էին զորս իրեն ծա-



ՃՈՆ ՆՈՔՍ

խին վրայ, ըսաւ, «Այս ի՞նչ ընտիր սեխ է, ի՞նչ զին կը պահանջես ատար համար, տղաս»:
«Իմ ունեցած սեխերուս վերջինն է այդ, տէր իմ, և թէպէտ շատ ընտիր կ'երևի, բայց անոր վրայ փտած տեղ մը կայ», ըսաւ տղան միւս կողմը դարձունելով սեխը:
«Իրաւ, կը տեսնեմ թէ վրան փտած կայ», ըսաւ մարդը, «կարծեմ պիտի չառնուիմ զոյն»: Բայց բտու նաև, նայելով տղուն աննեղ երեսին վրայ, «Ի՞նչպէս առևտուր ընել է ոյդ որ կը ցուցնես քու պտուղիդ պակասութիւնը յաճախորդներուդ»:
«Աւելի սղեկ է ընել այդպէս քան ընել խորդախտութիւն», ըսաւ տղան պարկեշտութեամբ:
«Ծիսակ է ըսածդ, սիրելի տղայ, միշտ մխոքդ պահէ ոյդ սկզբունքը, և շուրջը պիտի գտնես Աստուծոյ և

խեցի իբրև այս առաւօտ բռնուածներ: Ես ծախեցի զանոնք ճիշդ թարմ ձուկերուս գնով: Ես բնաւ պիտի չնայէր քու սեխիդ վրայ մինչև որ չերթար»:
«Բենիամին, ես սուս պիտի չխօսէի կամ ընէի խորդախտութիւն մը մինչև անգամ եթէ այս առաւօտեան շահածիս կրկինը շահէի այն կերպով: Բաց աստի, ես աւելի շահաւոր կ'ըլլեմ այս իմ հաւատարմութեանս համար, վասն զի ես ստացայ յաճախորդ մը, բայց դու կորսնցուցիր զայն»:
Եւ իրօք այնպէս եղաւ, վասն զի յաջորդ օրը մարդը եկաւ գնեց Հարրիին գրեթէ բոլոր պտուղները և բանջարեղէնները, բայց այնուհետև հասաւ մը անգամ չգնեց Բենիամինի ձուկերէն:

ԿՈՐԱՍՏԱԾ ՈՍԿԻՆԵՐԸ

Կը պատմուի թէ երեկտրական հեռագիրը մինչնոր էր հնարուած, անգլին ծառայութիւն մը մտադր Գեորջ Մեծին Բրիտանիոյ վաճառատանց միոյն: Կ'ըսուի թէ երբ տակաւին նոր ըլլալով այն, գաղտնիք մի էր հասարակութեան, չփոթութիւն մը ծագեցաւ Անգղիոյ դրամատան մէջ շարժութեան մը: Օրուան գործերն աւարտած էին, բայց հաշիւներու հաւասարակշռութիւնը շիտակ չէր: Ճիշդ 100 Անգլ. ոսկի կը պակասէր տոմարին մէջ: Այս ահաւոր բան է այդ հաստատութեան համար: Եթէ սխալն ըլլար հարկեր հազար կամ մէկ միլիոն ոսկի, չէր կրնար պատահել ասկէ աւելի մեծ ազմուկ և չփոթութիւն: Այլ թէ ստակը այլ սխալը պէտք էր գտնել: Վասն որոյ քարտուղարներէն ոմանք չէին կրնար քննանալ մինչև որ սխալը չուղղուէր:
Բոլոր այն գիշերը, և բոլոր յաջորդ կիրակի օրը դրամատան քարտուղարք և շարքը պիտի գտնես Աստուծոյ և

դուրս ելած էր չէնքէն, բայց չկար գրուած մը որ ցուցնէր թէ ուր դա- ցած էր այն :

Նոյն ժամանակ երիտասարդ քար- տուղար մը մինչ Նիրակի երեկոյ կ'եր- թար տուն պարտէզէ մը անցնելով, սկսաւ խորհել զբանաստան մէջ աշ- խատող իւր ընկերաց վրայ, և իսկոյն անոր մտայ մէջ կասկած մը ծագե- ցաւ : Յաջորդ առաւօտուն դնաց իւր աշխատած տեղը աճապարանօք, և բաւ իւր պետին թէ ինչ բանի կաս- կած ունէր : Սխալը թերեւս պատա- հած էր, ըսաւ, այն ժամանակ որ ստակ կը ծրարուէր անտուկներու մէջ Արեւմտեան Հնդկաստանու համար, որ զրկուած էին Սառիթամիթըն նա. դրուելու նպատակաւ :

Այս թերազրութեան կարեւորու- թիւն տուաւ պետք : Ահա հոս կար պատեհութիւն փորձել հեռագրին ցո- րութիւնը : Կայծակը պիտի մրցէր շողոյ դէմ, չոգի՛ որ ճամբայ ելած էր քառասունեութ ժամ առաջ : Շատ չուտով հեռագրին հարցոց ի Սառ- թամիթըն մարտն մը, «Մերա՞նք նաւը ճամբայ ելած է :» Եւ պատասխան եկաւ թէ «Ահա խարխիւր վեր կ'առ- նու :» «Կեցուր զայն յանուն թա- զուհւոյն», ետ փայլատակեց կայծակը, և պատասխան եկաւ, «Կեցած է :» «Նաուուն տախտակամանին վրայ հա- նեցէք այս ինչ սնտուկները [խնայու- ներով թէ ինչ նշան կը կրէին], կըսե- ցէք զանոնք խնամով, և խնայուցէք ինձ անոնց ծանրութիւնը»,՝ հեռագրեց պետք :

Կատարուեցաւ ինչ որ ըսուեցաւ, և նաուուն մէկ կողմը գանուեցաւ սնտուկ մը որ՝ քան միւս սնտուկները իբր 230 տրամ աւելի ծանր էր — ճիշդ հարիւր ոսկւոյ ծանրութիւն :

«Շատ լաւ, ուրեմն թող նաւը իւր ճամբան երթայ»՝ հեռագրուեցաւ : Եւ Արեւմտեան Հնդկաստանի վա- ճառատան հայտոյն անցուեցաւ հա- ըրիւր Անդղիական սակոյ գումարը :

ԵՐԿՈՒ ՄԵՂՈՒՄՔԱՂ ԹՈՉՆՈՅ ԸՆՏԱՆՆՅՈՒՄԸ

Մանկամարդ հիւանդ տիկին մը, որ կը բնակէր Սան Ռաֆայէլ, Գալիֆոր- նիոյ ամենէն առողջարար տեղերէն մին, կը հաստատէ Սէյնթ Ճէյմսի խօսքը թէ ամէն տեսակ թուշուս ընտանեց- ուած է ընտանեցուներով երկու պատ- վայրի մեղուաքաղ թուշուս : Անոր բժիշկը պատուէր տուած էր պառկած գիրքով կենալ ցերեկին, ամարուան եղանակին մէջ, պարտիզին մարգա- գեանին վրայ տարածուած գորգին (եւս) վրայ : Երբ որ մը պառկած կը գտնուէր այս կերպով, տեսաւ որ երկու մեղուաքաղ թուշուս կը նայէին իւր վրայ բաւական հեռիէն : Անոնց իմաստուն փոքրիկ գլուխները որ մէկ կողմ դարձած էին, կը ցուցնէին իրենց հետաքրքրութիւնը, և նա օգուտ քա- ղելով ասկէ, հնար մը խորհեցաւ ա- լելի մօտէն ծանօթութիւն ունենալ

անոնց վրայ : Փրցուց խոռոչաւոր ծա- ղիկ մը, անցուց իւր զլխուն վերե- գանուող ճիւղի մը վրայ, և լցուց զայն անուշցուած ջրով : Քանի մը վայր- կենէն յիշեալ երկու փոքրիկ թուշուսը խոթեցին իրենց բարակ կտուցները ծաղիկն մէջ և ծծեցին անոր մէջ գըտ- նուած անուշ ջուրը : Յաջորդ օրը տի- կինը լցուց նոյն ծաղիկէն թարմ ծա- ղիկ մը մեղրով : Թուշուց ընթացքէն հասկցուեցաւ թէ անոնք աւելի կ'ընա- ըէին մեղրը քան անուշցուած ջուրը :

Քանի մը օրուան մէջ թուշուսներն այնչափ ընտանեցան և այնչափ սն- համբեր եղան որ հաղիւ թէ տիկինը կը դնէր ծաղիկները մեղրով լեցուած, և ահա անմիջապէս կը խոթէին թրու- չունը իրենց փոքրիկ կտուցները մեղ- րին մէջ :

Օր մը մինչ տիկինը ծաղիկը ձեռքը բռնած կը լցունէր զայն կաթիլ կաթիլ դրդալէ մը, թուշուսը կը յափշտակէին կաթիլները մինչ կ'իշխային վար, և յետոյ անոնց համբերութիւնը հաս- նելով կը մտէին իրենց բարակ դեր- ձանի նման լեզուները դրդալին պա- րունակած մեղրին մէջ : Երկու թրու- չունը ևս էին արու, վասն որոյ կը կրու- ուէին իրարու հետ մեղրով լի ծա- ղիկը ձեռք բերելու համար : Բայց միարտն էին ուրիշ մեղուաքաղ թրու- չուն չհանդպցունել հոն, և երբ պի- ծակ կամ մեղու դար մօտերը, կը հա- լածէին զանոնք :

Երբ անձրևատ եղանակը վրայ հաս- նելով տիկինը դարձաւ իւր տունը, ջանաց ընտանեցուները զանոնք իւր հիւրանոցին պատուհանին քով : Ի սկզբ- բան թուշուսները այնպէս շարժեցան որ իբր թէ կը խորհէին որ սխալ մը գործուած էր : Կը բզգոյցին պատու- հանին մօտերը, ուր տիկինը կը կե- նար, ձեռքը բռնած ծաղիկը և մեղ- րով լեցուն դրդալը, կամ՝ կը դիտէին զնա մերձակայ ստէ մը, բայց ումոյ մը բան չէին կամեր առնուլ : Եւ սա- կայն թուշուց մին անստով տիկինը ձայնին հրուէրներուն, թառեցաւ անոր ձեռքին վրայ և առաւ կրկին և կրկին մեղրի կաթիլներէն :

Խ Ա Ղ

Խաղն ազէկ բան է իւր տեղը : Կը սիրենք տեսնել աղայոց խաղալը և գլուխը անտեղ, նաև չափահաս անձան- յը, որով կը փոխուի անոնց աւելի ծանր պարտականութեանց զբաղումը և հանգիստ կ'առնուն այն միջոցաւ : Մարդոց խաղալու կերպն ալ կը ցուցնէ թէ ինչ բարոյց աէր են անոնք : Եթէ ոք խաղի մէջ է արդարադատ, ճշ- մարտական, համեստ և բարեբարոյ, հարստականապէս նոյնը պիտի ըլլայ նաև ուրիշ բաներու մէջ. իսկ եթէ է խարդալս, ստախոս և չարաբարոյ, հա- լանականապէս նոյնը պիտի ըլլայ նաև ուրիշ բաներու մէջ : Ինչպէս ուրիշ բաները, նոյնպէս և խաղը ունի իւր փորձութիւնները և վտանգները, և մեր փոքրիկ բարեկամը պէտք է որ զԳՅԶ

ըլլան անոնց դէմ և տեղի չտան ա- նոնց : Շատ անկայել բան է նենդու- թիւն բանեցուներ, նուազ բաները նեղ կամ չար բարք ցուցնել երբ կը յաղթուիք խաղի մէջ, կամ բիրտ կեր- պով վարուիլ երբ իրերը չեն ըլլար այնպէս ինչպէս կ'ուզէք : Գիւրին կը ծագին վէճեր և կռիւներ, և անոնց- մէ պարտի իւրաքանչիւր ոք զգուշա- նայ : Խաղացէք, բայց խաղացէք միշտ վայելուչ և ուղիղ կերպով, աղէկ վար- ուեցէք իրարու հետ, զոչոչ եղէք կրու- ուելէ և վիճելէ, և խաղը կ'ըլլայ օգ- տակար և առողջութեան նպատաւ- ար բան մը :

ՀԱՆՆԵՂՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԷՆ

ՍՈՂՈՄՈՆԻ ՄԵՒ ԱՌԱԿԸ

- Ե՛ւ կը բաղկանամ քառասուն և ինն գրերէ :
- Իմ 9. 23. 5. 35. 40. 24. 12. 41. 33. 48. 38. 34. Էր պատմիչ յերկրորդ դարու .
- Իմ 20. 3. 46. 29. 28. 43. Էր Դաւթի որդ- ւոց մին .
- Իմ 6. 44. 4. 25. 17. 21. Էր Ղեւիթ թրուանց մին .
- Իմ 45. 22. 42. 1. 32. 49. 7. 9. Է Ասիոյ մի լեռն .
- Իմ 37. 1. 31. 34. 30. 16. 4. Էր Ասուերոսի խորհրդականաց մին .
- Իմ 15. 39. 6. 26. 47. 34. Էր Յոսայ ընկե- րաց մին .
- Իմ 8. 23. 2. 27. 1. 42. 26. 48. Էր Ասիոյ եօթը եկեղեցեաց մին .
- Իմ 18. 4. 19. Էր տեղուանքն ուր Նեէ- միայ կայնեցուց զօրաց մի մասը .
- Իմ 14. 33. 11. Էր այն որով Յիսուս կոյ- րին աչքերը ծեփեց :
- Իմ 13. 36. 40. Ե՛ւ ը. ը. գրերը :

Կ. Պոլիս .

ՅՈՒՄԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

ՊՈՏՄՈՒՄԸ ՀԱՆՆԵՂՈՒԿԻ

Անցեալ Ամսոյ Հանելուկին պատասխանն է, — «Իմաստութեան սկզբը Տերօրը վախն է»՝ Առակ. Ա. 7.

Տառասխալն է «Ի» գիրը, որ գրուած է փոխա- նակ «Ղ» ե :

Կ. Պոլիս տառային պատասխանը գրկեցին կղզե- նակ երեք փոքրիկ գլուխներ՝ միասին այխատելով, որ կ'ապացուցանէ թէ շահաւետ է ընկերութիւն կազմել : Ա. Յուսեան ստացանք միւսները կար- գաւ :

Կ. Պոլիս —

Արքայի 3. Մատթէոսեան	Պետրոս Կերկարաբանացի
Արքայի 4. Մատթէոսեան	Պետրոս Կերկարաբանացի
Նախկին 5. Կարգաբան	Պետրոս Կերկարաբանացի
Հրանտ 6. Մատթէոսեան	Պետրոս Կերկարաբանացի
Գ. Ս. Գաբրիէլեան	Պետրոս Կերկարաբանացի
Վահան Միլիտան	Պետրոս Կերկարաբանացի
Սիսակ Գ.	Պետրոս Կերկարաբանացի

Ատաբազար — Պետրոս Կերկարաբանացի
Մարգար — Յարութիւն Կերկարաբանացի
Պողոս Գ.

Ա. Արեւիկայի Մեծիմաստ Գրչարար Կերկարաբանացի
Խմբագիր Գ. Ս. ՊՈՒՆԸՄ

Ֆինանսները եօզուշու. Աւերգան խան :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆ Ա. ՅԱՆՈՒ ՊՈՅԱՆՅԱՆ